ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ ЛОРИ
МЭРИЯ Г. ТАШИР
МЭР

ք. Տաշիր, քաղաքային հրապարակ
հեռ. 2-22-41,2-25-77

г. Ташир, городская площадь
тел.2-22-41,2-25-77

N 888 -19
*06 հունիս 2019թ.*

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ուղարկում ենք ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի NN 503-Ա-512-Ա որոշումները:

Առդիր՝ 14 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

*Կատ՝ Նունե Սոլոյան*
*(0254) 2-21-68*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-503-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

*29 մայիս 2019թ.*

## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՄԵԴՈՎԿԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-072-0109-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԱՆԻԿ ԳԵՎՈՐԳԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Աննա Բարսեղյանի (անձնագիր AR0311368, տրված 13.06.2017թ.) դիմումը, որը լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Արժանիկ Գևորգի Բարսեղյանի անունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի 2018 թվականի մայիսի 14-ի թիվ ԼԴ3/0177/02/18 վճիռը, 1991թվականի հուլիսի 7-ին կազմված անշարժ գույքի տեխնիկական անձնագիրը, ‹‹Մել և Միլ›› գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը և ղեկավարվելով ‹‹Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշման 29-րդ կետի ա) ենթակետով, նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար օրիանական հատկացված 0.24հա և կից 0,00237հա հողամասերը և կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ չափագրման արդյունքում հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0,24237հա և այն, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը՝ 1980թ.-ին

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Օրենքի ուժով ճանաչել Արժանիկ Գևորգի Բարսեղյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Մեդովկա 06-072-0109-0003 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0,24237 հա մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Ճանաչել Արժանիկ Գևորգի Բարսեղյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Մեդովկա 06-072-0109-0003 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0,24237 հա մակերեսով հողամասի վրա կառուցված բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված շինությունների բնութագրի:
4. Տնատիրությանը տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեդովկա, 2-րդ փողոց, թիվ 11 բնակելի տուն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանմունքում:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. մայիսի 29
ք. Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-504-Ա

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*29 մայիս 2019թ.*

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշման 29-րդ կետի դ) ենթակետով `

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Լյովա Արտաշի, Լարիսա Վլադիմիրի, Նարինե Լյովայի, Սյուզաննա Լյովայի Սուքիասյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը / վկայական՝ 1776417, տրված՝ 14.01.2006թ/ Լոռու մարզ, ք.Տաշիր, Սայաթ-Նովա փողոց, թաղամաս 4 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 4-րդ թաղամաս, Սայաթ-Նովա փողոց, թիվ 6 հասցե:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

*2019թ. մայիսի 29*
*ք. Տաշիր*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-505-Ա

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

*30 մայիս 2019թ.*

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ դեկտեմբերի 29-ի N2387 Ն որոշման 29-րդ կետի ա) ենթակետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-008-0029-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 1-ին թաղամաս, Գետափնյա փողոց, թիվ 7 բնակելի տուն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

*2019թ. մայիսի 30*
*ք. Տաշիր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-506-Ա

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*30 մայիս 2019թ.*

## ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ դեկտեմբերի 29-ի < N2387 Ն որոշման 29-րդ կետի դ) ենթակետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Աղասի Միշայի Ռաֆաելյանին սեփականության իրավունքով պատկանող խանութին /վկայական N1610246, տրված՝ 28.02.2006թ/ Լոռու մարզ, ք.Տաշիր, Կիրովի փողոց, թիվ 202 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 6-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 202/3 հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ТАШИР LORI REGION TASHIR MUNICIPALITY ՀՀ РА RA

*2019թ. մայիսի 30*
*ք. Տաշիր*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌԻԻ ՄԱՐԶ**
**ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-507-Ա

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

*30 մայիս 2019թ.*

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/43» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. մայիսի 10-ի N 4 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, հայտը ներկայացնելը ւօրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում կոմիտեից ստացված դրական եզրակացությունը և այն, որ «ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի կատարման ապահովումը սահմանված ժամկետումներ կայացվել է.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ»ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար ծառերի ու ծաղիկների մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/43/1» ծածկագրով գնման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2019թ. մայիսի 30
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-508-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41,
Ֆաքս (0254) 2-22-41

*31 մայիս 2019թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԳԵՎՈՐԳ ԷԴՎԱՐԴԻ ՄԽՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի 08 մայիսի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N714-Ն որոշումով, հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի 31.05.2019թ. թիվ 3 արձանագրությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, թաղամաս 10, Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 156/1 հասցեում 358.6քմ ( կադաստրային ծածկագիր՝ 06-008-0249-0028) հողամասը 135650 (հարյուր երեսունհինգ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամով օտարել 2019թ. մայիսի 31-ին Տաշիրի համայնքապետարանի աճուրդային և մրցույթային հանձնաժողովի կողմից անցկացված աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված Գևորգ Էդվարդի Մխոյանին:
2. Գևորգ Էդվարդի Մխոյանին՝ 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը:

3. Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ Գևորգ Էդվարդի Մխոյանի հետ երկու օրվա ընթացքում կնքվել օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. մայիսի 31
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-509-Ա

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*31 մայիս 2019թ.*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35, 42 և 43 հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912–Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N731-Ն որոշումները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշման 29-րդ կետի ա) ենթակետը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, հաշվի առնելով այն, որ Տաշիր քաղաքի 06-008-0103-0043 կադաստրային ծածկագրով ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 06-008-0103-0043 կադաստրային ծածկագրով 29,2 քմ հողամասի վրա քաղաքացի Մարտիկ Անուշավանի Փանյանի կողմից ինքնակամ կառուցված 29,16քմ մակերեսով (արտաքին չափերով) ավտոտնակի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Վերոհիշյալ համայնքային սեփականություն հանդիսացող կառույցը համարել օրինական:

3. Հողամասի սահմանները որոշվում են «Արտյոմ Սաքանյան» ԱՁ կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Մարտիկ Փանյանին առաջարկել օրինականացված կառույցը և կից հողամասը պետական գրանցում ստանալուց հետո, ուղղակի վաճառքի կարգով գնել գործող տուրքի և հողամասի կադաստրային արժեքի չափով՝

1 ) Ավտոտնակ - 16040 ՀՀ դրամ

2) Հողամաս - 6482 ՀՀ դրամ:

5. Ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 6-րդ թաղամաս, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 3/4 ավտոտնակ:

7. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

*2019թ. մայիսի 31*

*ք. Տաշիր*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-510-Ա**

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254) 2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*31 մայիս 2019թ.*

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ դեկտեմբերի 29-ի N2387 Ն որոշման 29-րդ կետի դ) ենթակետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Կարապետ Գևորգի, Սիրուն Մարգարի, Ռուզաննա Կարապետի, Փիրուզ Վարդի, Լիլիթ Վարդանի, Տաթևիկ Վարդանի, Վարդան Կարապետի Առաքելյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին Լոռու մարզ, ք.Տաշիր, Գրիբոյեդովի փողոց, տուն թիվ 13 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 4-րդ թաղամաս, Գրիբոյեդովի փողոց, թիվ 13 բնակելի տուն փոստային հասցեն

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

*2019թ. մայիսի 31*
*ք. Տաշիր*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-511-Ա

---

Վ. Սարգսյան 94, Հեռ. (0254)
2-22-41, Ֆաքս (0254) 2-22-41

*31 մայիս 2019թ.*

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության հատկանիշներով նախատեսված Աշոտ Արամի Սուքիասյանի կողմից վարչական իրավախատում կատարելու հիմքով 2019թ. մայիսի 29-ին կազմած 1/2 արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, 219.1-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ պարբերություններով, 37-րդ, 281-րդ, 282-րդ և 283-րդ հոդվածներով, «Վարչարաության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թղամաս 8,Գետափնյա փողոց, թիվ 8/1 հասցեի բնակիչ Աշոտ Արամի Սուքիասյանին ենթարկել վարչական պատասխանատվության Հյասատանի Հանրապետության վարչական իրավախատումների մասին օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված արարքը կատարելու համար և նշանակել տուգանք 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081298 հաշվարկային հաշվին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:

4. Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում;

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

*2019թ մայիսի 31*
*ք Տաշիր*

31.05.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-512-Ա

Վ. Սարգսյան 94, Հեռ.
(0254) 2-22-41, Ֆաքս (0254)
2-22-41

*03 հունիս 2019թ.*

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 29-րդ կետի դ) ենթակետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Հարություն Վաղինակի, Ալլա Հովհաննեսի, Լիլիթ Հարությունի և Հայկարամ Հարությունի Մկրտչյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին՝ Լոռու մարզ, ք. Տաշիր ,Կիրովի փողոց, տուն 26 հասցեի փոխարեն տրամադրել՝ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 4-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 26 բնակելի տուն փոստային հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2019թ. հունիսի 3
ք.Տաշիր